*ՄԼԵՀ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Արամ Հովհաննիսյան

Կիլիկիայի հայկական պետության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 12-րդ դարի 70-ական թվականների պատմության ուսումնասիրությունը, և հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կիլիկիայի մեծ իշխանապետ Մլեհի կառավարման ժամանակաշրջանի ինչպես քաղաքական, այնպես էլ եկեղեցական պատմության ուսումնասիրությունը: Հայտնի է, որ այս պատմաշրջանում Կիլիկյան Հայաստանում Ռուբինյանների գլխավորությամբ ստեղծված հայկական իշխանությունը լուրջ քայլեր էր մղում իշխանապետության հետագա զարգացման և թագավորության հռչակման համար: Եվ այս ընթացքում հայոց իշխանապետներից պետք է առանձնացնել Մլեհ Ռուբինյանին, ով կարևոր դեր կատարեց հայկական իշխանապետության հզորացման գործում: Ավաղ, նրա ներքին և արտաքին քաղաքականության և ընդհանրապես կյանքի մի շարք հարցերի մանրամասնությունները մինչ այժմ էլ խորությամբ ուսումնասիրության չեն արժանացել, և շատ հարցեր դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից: Դրանց մեջ կարելի է առանձնացնել մի շատ կարևոր և հետաքրքիր հարց, որը, կարծում ենք, կհետաքրքրի թե հետազոտողներին և թե ընթերցող լայն շրջանակներին: Արդյոք Մլեհը Ռուբինյանը, ով հայոց պատմության մեջ մնացել է որպես շատ դաժան և անխիղճ անձնավորություն, ուրացյալ է եղել, թե ոչ:

Մեր ներկա ուսումնասիրությունը նվիրված է հենց այդ բացը լրացնելուն:

Հայտնի իրողություն է, որ Մլեհ իշխանապետը մի յուրօրինակ և ինքնատիպ անձնավորություն էր Կիլիկիայի հայկական պետության պատմության մեջ: Ի տարբերություն ժամանակի մյուս հայ իշխանների և գործիչների՝ այլ քաղաքական տեսակետներ է դավանել և որոշ դեպքերում

* Հոդվածը ներկայացվել է 29.01.2020 թ., գրախոսվել է 17.02.2020թ., ընդունվել է տպագրության 05.04.2020 թ.:

աչքի է ընկել դաժանությամբ:

Ներկա հետազոտության մեջ կցանկանայինք որոշակի անդրադարձ կատարել Մլեհ իշխանապետի դավանանքի պատկանելությանը և պատասխանելու մեզ հուզող հարցին:

Ընդհանրապես պատմության որոշ դրվագներում հայոց իշխանապետի բավական խիստ և դաժան վերաբերմունքը տարբեր գործիչների և հոգևորականների նկատմամբ, հազարավոր քրիստոնյաների վաճառքի հանելը Հալեպի շուկայում, ինչպես նաև համագործակցությունը արաբական և թուրքական պետությունների հետ, մյուս կողմից էլ քրիստոնյա պետությունների դեմ պայքարը դրդել է որոշ հետազոտողների՝ Մլեհին ուրացյալ պիտակը կպցնելու, որի համար հիմնավորման փաստարկ է եղել նրա մահմեդական լինելու հանգամանքը:

Նշենք, որ վերը նշված խնդրի վերաբերյալ միջնադարյան սկզբնաղբյուրներում կան որոշակի վկայություններ: Ցավոք, հայկական պատմիչների գերակշռող մասը, ովքեր տեղեկություններ են հաղորդում Մլեհ Ռուբինյանի կյանքի և գործունեության մասին, գրեթե ոչինչ չեն նշում հայոց իշխանապետի դավանանքային պատկանելության մասին: Նրանք միայն բավարարվում են՝ նշելով, որ Մլեհը ժամանակին ծառայության մեջ է եղել Հալեպի սուլթան Նուր ադ-Դինի մոտ և եղբոր մահվանից հետո վերադարձել է Կիլիկիա և գրավել իշխանությունը[1]:

Ինչպես նկատում ենք, վերջիններիս տեղեկությունների մեջ չկա Մլեհի ուրացյալ լինելու մասին որևէ փաստարկ: Մի փոքր այլ ենթատեքստով է խոսում Կիլիկյան Հայաստանի հայտնի գործիչ և օրենսդիր Սմբատ Սպարապետը, ով Մլեհի և եկեղեցու հարաբերությունների մասին խոսելիս մեղադրում է վերջինիս հակաեկեղեցական մի շարք ամոթալի արարքների մեջ [2]: Նախ Սմբատը այս մտքից բացի՝ այլ տեղեկու-

---

[1] Տես **Վահրամ Ռաբունի**, պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, էջ 210-211, Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 218, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. բ, կազմեց Վ. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 103 և ուրիշներ:

[2] Տես **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 189-190, նաև Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի հայոց պատմութիւն, Մոսկուա, 1856, էջ 88-89: Ընդհանրապես Սմբատի բացասական վերաբերմունքը դեպի հայոց իշխանը ու նաև նրա որդին պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինիս հայրը՝ Կոստանդինը, և Մլեհի որդին՝ Գևորգ իշխանը, ժամանակին մրցակիցներ են եղել Կի-

թյուն չի տրամադրում և չի հստակեցնում, թե որոնք էին այդ ամոթալի արարքները: Իսկ եթե անգամ հավատանք Սմբատ Սպարապետի տեղեկությանը և ընդունենք, որ Մլեհը մի շարք հակաեկեղեցական արարքներ է գործել, դա դեռ չի նշանակում, որ հայոց իշխանապետը ուրացյալ է եղել և դավանել է մահմեդականությունը: Որպես օրինակ կարելի է հիշել Պապ թագավորին, ով մի կողմից թուլացրեց Հայաստանում եկեղեցական կազմակերպությունը, փակեց կուսանոցների մի մասը, վերացրեց տասանորդի հարկը, բայց մյուս կողմից էլ նրա օրոք Հայ առաքելական եկեղեցին դարձավ անկախ: Եվ վերջապես Մլեհը մինչ Կիլիկիայում հայոց իշխանապետ դառնալը մի կարճ ժամանակ եղել է նաև տաճարականների միաբանության անդամ, սակայն չենք կարող ասել, որ վերջինս ընդունել է նրանց կրոնական ուղղությունը:

Ինչ վերաբերում է մյուս հայ հեղինակներին, ապա նրանցից և ոչ մեկն էլ չի հիշատակում Մլեհ իշխանապետի ուրացյալ լինելու և մահմեդականությունը ընդունելու հանգամանքը, թեև նկատում ենք, որ հայոց պատմիչների մեծ մասը, հարմար առիթը բաց չթողնելով, շատ բացասական է խոսում նրա մասին: Նման պարագայում ինչն էր խանգարում մեր պատմիչներին՝ նշելու նաև, որ Մլեհ Ռուբինյանը ուրացել է քրիստոնեական կրոնը և ընդունել մահմեդականություն:

12-րդ դարի երկրորդ կեսերի Կիլիկյան Հայաստանի և շրջակա պետությունների պատմության ուսումնասիրման համար շատ կարևոր և վստահելի սկզբնաղբյուրներ են պատմիչներ Միքայել Ասորու, Բար Հեբրաուսի և Անանուն Եդեսացու ժամանակագրությունները: Պատմիչները թեև իրենց աշխատություններում բազմիցս անդրադառնում են Մլեհին և խոսում նրա կատարած վայրագությունների և քրիստոնյաների նկատմամբ գործած չարությունների մասին, սակայն որևէ խոսք չեն նշում վերջինիս ուրացյալ լինելու մասին[1]:

լիկյան Հայաստանում սպարապետի պաշտոնի համար, և Լևոն Մեծագործը այդ պաշտոնը վստահել է Կոստանդինին: Այդ մասին տես՝ Ա. Հովհաննիսյան, Լևոն Մեծագործի և Գևորգ իշխանի հարաբերությունների պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, 2016, N 2, էջ 45-50:

[1] Տես **Միքայել Ասորի**, Ժամանակագրություն հայոց, Երուսաղէմ, 1870, էջ 454-455, Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, ասորական աղբյուրներ, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982, էջ 135, Bar Habraeus, The Chronography, London, 1932, p. 292, 302-305.

Հետազոտվող խնդրի վերաբերյալ որոշ տեղեկություններ են հաղորդում նաև եվրոպական և արաբական սկզբնաղբյուրները: Մասնավորապես Մլեհի ուրացյալ լինելու մասին ժլատ տեղեկություններ են պահպանվել եվրոպական՝ հատկապես լատինական աղբյուրներում, որոնցում հիշատակություններ կան հայոց իշխանապետի վարած հակաֆրանկ և հակաբյուզանդական քաղաքականության մասին: Մյուս կողմից էլ հայտնի էր վերջինիս թշնամությունը Արևելքում հաստատված հոգևոր-ասպետական միաբանությունների հետ, որոնց հետ մինչ Հալեպի սուլթանություն մեկնելը մի կարճ ժամանակով համագործակցել էր Մլեհը:

Այսպես, հայոց իշխանապետի ուրացյալ լինելու հանգամանքի մասին վկայում է ժամանակակից պատմիչներից Գիյոմ Տյուրացին, ով իր հայտնի պատմության մեջ խոսում է նաև Կիլիկիայի հայոց իշխանապետությունում տեղի ունեցող մի շարք իրադարձությունների մասին և հավաստիացնում, որ Մլեհը, ուրացյալ լինելով, մի կողմ դրեց Աստծո օրենքը և քրիստոնյաներին այնքան վնասներ պատճառեց, որքան որ կարողացավ[1]: Սակայն իր աշխատության մեջ՝ մեկ այլ տեղ հեղինակը, հավանաբար մոռանալով իր հաղորդած նախկին տեղեկությունը, նշում է, որ Մլեհը նույն հավատն էր դավանում և մեծ ատելություն էր տածում իրենց հավատակիցների նկատմամբ[2]:

Փաստորեն հիշյալ հեղինակը հակասական տեղեկություններ է հաղորդում հայոց իշխանապետի կրոնական պատկանելիության մասին: Եվ շատ բնական է, որ հեղինակի հաղորդած իրարամերժ տեղեկությունները չեն կարող էական դերակատարում ունենալ մեր հետազոտության լուսաբանման համար: Մլեհին ուրացյալ համարվելու մասին է վկայում նաև 13-րդ դարի լատին պատմագիր Առնոլդ Լյուբեկացին[3], որի վկայությունները, սակայն, դարձյալ հավատ չեն ներշնչում: Եվ ընդհանրապես այս հարցում լատին պատմիչների տեղեկությունները անաչառ չեն և ամենայն հավանականությամբ չունեն օբյեկտիվություն:

Պետք է նշել մի շատ կարևոր հանգամանք: Եթե իրականում Մլեհը ուրացյալ լիներ և մահմեդականություն ընդունած, ապա այդ փաստը

---

[1] Տես Recueil des historiens des Croisades, Historiens occidentaux, tome 1, Paris, 1844, p. 991.

[2] Տես Նույն տեղում:

[3] Տես Arnold, Chronica Slavorum, ex recensione I. M. Lappenbergil, Hannoverae, 1868, p. 23.

դժվար թե վրիպեր ժամանակակից մահմեդական և մասնավորապես արաբ պատմիչների ուշադրությունից, որոնք, կարծում ենք, հաճույքով կարձանագրեին այդ իրողությունը: Սակայն նույնիսկ նրանց թողած աշխատություններում որևէ հստակ հիշատակություն չկա այդ մասին: Իսկ սա մի դարաշրջան է, երբ ասպարեզում գործել են բազմաթիվ հայտնի արաբ պատմիչներ, և անհնար է, որ վերջիններս, որոնք բավական հարուստ տեղեկություններ են տալիս Կիլիկյան Հայաստանի և հարևան երկրների պատմության, ինչպես նաև առանձին գործիչների մասին, անտեսեին այդ կարևոր հարցը: Դեռ ավելին, Մլեհի դավանանքային պատկանելության մասին խոսելիս շատ արաբ հեղինակներ նշում են, որ նա քրիստոնյա էր: Որպես ապացույց բերենք մի քանի պատմիչների վկայությունները:

Այսպես, մեզ հետաքրքրող խնդրին անդրադարձել է միջնադարյան արաբ պատմիչներից Իբն ալ-Ասիրը, ով, իր հայտնի աշխատության մեջ անդրադառնալով Հալեպի սուլթան Նուր ադ-Դինի գործունեությանը, նշում է, որ Հալեպի սուլթանը հպարտանում էր, որ Մլեհին օգտագործում է իր կրոնի մարդկանց դեմ պայքարելու համար [1]: Իսկ մեկ այլ տեղում էլ տեղեկացնում է, որ նա միակ քրիստոնյա իշխանավորն էր, որ երբևիցե արժանացավ նման պատվի[2]:

Այսինքն՝ Իբն ալ-Ասիրը, ով բավական ստուգապատում հեղինակ է, հստակ արձանագրում է, որ Մլեհը դավանել է քրիստոնեական կրոնը: Ուրեմն կասկածից վեր է, որ եթե Մլեհը ընդունած լիներ մահմեդականութունը, ապա այդ փաստը կարձանագրվեր արաբ պատմիչի կողմից: Նշենք նաև, որ Իբն ալ-Ասիրը միակ արաբ հեղինակը չէ, ով անդրադարձել է այս խնդրին:

Այսպես, Իբն ալ-Ասիրից բացի՝ Մլեհ Ռուբինյանի կրոնական պատկանելության վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում նաև մեկ այլ արաբ պատմիչ՝ Քամալ ադ-Դին Իբն ալ-Աթիրը, ով իր աշխատության մեջ բերում է Հալեպի սուլթան Նուր ադ-Դինի խոսքերը և նշում, որ սուլթանը Մլեհին իր մոտ ծառայության էր վերցրել, որպեսզի վերջինս օգ-

---

[1] Տես Իբն ալ-Ասիր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Լիակատար պատմություն, Երևան, 1981, հ. Ա, էջ 263:

[2] Տես Նույն տեղում:

տագործի ընդդեմ իր հավատակիցների[1]: Այսինքն՝ Քամալ ադ-Դին իբն ալ-Աթիրը ևս վկայում է, որ Մլեհը ուրացյալ չի եղել: Եվ վերջապես Մլեհի քրիստոնյա լինելու մասին վկայում է նաև արաբ հեղինակ ալ-Դահաբի-ին, ում տարեգրության մի հատված ներկայացված է Կ. Մութաֆյանի աշ-խատության մեջ: Այստեղ հեղինակը շեշտում է, որ Սսի թագավորության վրա հարձակվելու համար Նուր ադ-Դինը օգտվում է Լևոնի որդի Մլեհի ծառայություններից, որը հայ քրիստոնյա մի պարոն էր[2]:

Ինչպես նկատում ենք, միջնադարյան արաբ հեղինակները, հակա-ռակ կաթոլիկ պատմիչների տեղեկությունների հստակ արձանագրում են, որ հայոց իշխանապետը քրիստոնյա է եղել, և կարծում ենք, որ նրանց բերած տեղեկությունը ավելի օբյեկտիվ է և արտացոլում է պատ-մական ողջ իրականությունը:

Վերը նշված խնդրի շուրջ գոյություն ունեն նաև մի շարք տեսակետ-ներ մասնագիտական գրականության մեջ: Դրանք կարելի է բաժանել տարբեր խմբերի: Նախ հետազոտողների մի որոշակի խումբ խոսում է Մլեհի գործունեության մասին, սակայն որևէ խոսք չի նշում վերջինիս դավանանքային պատկանելության վերաբերյալ: Հետազոտողների երկ-րորդ խումբ էլ կարծիք է հայտնում, որ Մլեհը ուրացյալ է եղել: Այդ ուսում-նասիրողներից կարելի է առանձնացնել Ս. Պապիկյանին[3], Ռընե Գրու-սեին[4], Յ. Տեր-Ղազարյանին[5], Յ. Հովհաննիսյանին[6], Ս. Ռենսիմանին[7],

---

[1] Տես The Chronicle of Ibn al-Athir for the crusading period, part two, the years 541-589 (1146-1193), The age of Nur al-din and Saladin, translated by D. S. Richards, 2007, p., 210"

[2] Տես **Al-Dahabi**, Les dynastes I Islam, extraits (1055-1258), Damas, 1979, p. 148, հղումը կատարված է Կ. Մութաֆյանի Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում աշխատու-թյունից, Երևան, 2001, էջ 396:

[3] Տես **Ս. Պապիկյան**, Հայերը և խաչակիրները, Հանդէս Ամսօրեայ, Վիէննա, 1965, N 4-6, էջ 273-274:

[4] Տես **Ռընե Գրուսե**, Պատմություն խաչակրաց, Խաչակիրները և հայերը, հատուրն ա-ռաջին, Երևան, 2005, էջ 275:

[5] Տես **Յ. Տեր-Ղազարյան**, Հայկական Կիլիկիա, Տեղագրութիւն, Անթիլիաս, 1966, էջ 267:

[6] Տես **Յ. Հովհաննիսյան**, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենե-տիկ, 1989, էջ 505:

[7] **Runciman**, A history of the Crusades, Volume II, kingdom of Jerusalem and the Frankish East, 1100-1187, New-York, Cambridge University Press, 1987, p. 389.

Ս. Դադոյանին[1] և ուրիշների: Մասնավորապես Ս. Դադոյանը նշում է, որ Մլեհը նախ միացավ Զանգիին, ապա ընդունեց իսլամ և միայն դրանից հետո նշանակվեց Կուրիս քաղաքի և նրա շրջակա տարածքների ղեկավար[2]: Պետք է նշել մի կարևոր հանգամանքի մասին ևս: Այն, որ այս տեսակետի կողմնակից գրեթե բոլոր հետազոտողները, այդ թվում և Ս. Դադոյանը ցույց չեն տալիս այն սկզբնաղբյուրները, որից որ օգտվել են, ինչն էլ բնականաբար շատ կասկածելի է դարձել:

Եվ վերջապես հետազոտողների երրորդ խումբն էլ գտնում է, որ Մլեհ Ռուբինյանի ուրացյալ լինելու մասին որոշ ուսումնասիրողների պնդումները սխալ են և չեն կարող լուրջ ընդունվել: Այստեղ մենք կցանկանանք կանգ առնել մի քանիսի առաջ քաշած տեսակետների վրա:

Այսպես, քննվող հարցին առաջիններից մեկը արձագանքել է հայտնի հայագետ Ղևոնդ Ալիշանը, որն իր աշխատությունում նշում է, որ Մլեհը չի ուրացել քրիստոնեությունը և դարձել մահմեդական. «Վասն զի որքան ալ գործովք անկարգ և անկրօն էր՝ յայտնապէս ուրացած չէր զքրիստոնեութիւն»[3]: Որպես ապացույց անվանի հայագետը նշում է այն փաստը, որ հայոց իշխանապետը Նուր ադ-Դինի հետ դրամ է հատել, որի մի երեսին խաչի նշան է եղել[4]: Սա հստակ ապացուցում է, որ Մլեհ Ռուբինյանը ուրացյալ չի եղել և դավանել է քրիստոնեությունը: Հաջորդ հետազոտողը, որն որոշակի անդրադարձ է կատարել ուսումնասիրվող հարցին, Լ. Տեր-Պետրոսյանն է, ով, անդրադառնալով մեզ հետաքրքրող խնդրին, անհիմն է համարում հայոց իշխանապետի ուրացյալ լինելու տեսակետը և իր մեծարժեք աշխատությունում անդրադառնալով Մլեհին՝ նշում է. «Նրա կողմից քրիստոնեության դեմ գործած դավաճանության կամ «հայ ժողովրդի զգացումները» վիրավորած լինելու մասին խոսք անգամ չի կարող լինել, քանի որ հայ իշխանի վարքագիծը թելադրված էր

---

[1] Տես **S. Dadoyan**, The Armenians in the Medieval Islamic World, Volume II, New Jersey, 2013, p. 163, թերևս այստեղ մի փոքր անհասկանալի տեսակետ էլ հայտնում է Բակուրանը, ով հստակ չի նշում, թե արդյոք Մլեհը ընդունել էր մահմեդականությունը թե ոչ, սակայն կարծիք է հայտնում, որ հայոց իշխանապետը գործում էր լոկ հակաքրիստոնեական ոգով, Բակուրան, Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, Պէյրութ, 1959, էջ 15:

[2] Տես **S. Dadoyan**, նույն տեղում:

[3] Տես **Ղ. Ալիշան**, Շնորհալի Եւ պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազար, 1873, էջ 327:

[4] Նույն տեղում:

զուտ քաղաքական պրագմատիզմով[1]»: Եվ վերջապես Մլեհի ուրացյալ լինելու հանգամանքի մասին խոսում է նաև ժամանակակից հետազոտողներից Կ. Մութաֆյանը և պատասխանելով մի շարք հետազոտողներին՝ նշում, որ նրա ուրացյալ լինելու վարկածը այդքան էլ միանշանակ չէ[2]:

Կարելի է միանշանակ համաձայնվել վերը նշված հետազոտողների կարծիքների հետ, քանզի վերջիններիս առաջ քաշած պնդումները շատ տրամաբանական են: Դրա օգտին են խոսում մի շարք այլ փաստեր ևս, որոնցից մի քանիսին կցանկանանք անդրադառնալ.

Մլեհը իր կառավարման ժամանակաշրջանում կառուցեց Մեծ-քարի նշանավոր վանքը և հովանավորչություն ստանձնեց այդ նշանավոր կենտրոնի նկատմամբ, որի մասին ուղղակի վկայություն կա ԺԳ դարի հիշատակարաններից մեկում. «Բարեպաշտ մեծն Մլեհն շինեալ էր՝ զհռչակաւոր անապատս Մեծքար եւ զմեծ եկեղեցին յանուն Տիրամորն…[3]»: Այստեղ շատ բնական հարց կարող է առաջ գալ: Միթե Մլեհ Ռուբինյանի այդ գործունեությունը ուրացյալ անձնավորության գործելավոճ կարող էր լինել:

Դժվար է պատկերացնել, որ 12-րդ դարի 70-ական թվականների սկզբին Կիլիկիայի պետության վերնախավը կհամաձայնվեր հայոց իշխանապետության ղեկավարումը հանձնել մի անձնավորության, ով ուրացյալ էր, նույնիսկ այն պարագայում, երբ նրա թիկունքին կանգնած էր Հալեպի սուլթան Նուր ադ-Դինը:

Հայոց իշխանապետը ամուսնացած է եղել Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի քրոջ հետ: Դժվար է պատկերացնել, որ Մլեհը, լինելով մահմեդական, իրավունք կունենար ամուսնանալ Պահլավունիների այդ նշանավոր գերդաստանի դստեր հետ:

Մլեհ իշխանապետի սպանությունից հետո նրան թաղեցին հենց իր իսկ կառուցած Մեծ-քարի վանքի տարածքում[4]: Կասկածից վեր է այն հանգամանքը, որ ուրացյալ անձնավորությանը կթաղեին Կիլիկիայի տարածքում գտնվող վանական համալիրի բակում:

---

[1] Տես **L. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 146-147:

[2] Տես **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 395:

[3] Տես Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դարի, կազմեց՝ **Ա. Մաթևոսյանը**, Երևան, 1984, էջ 88:

[4] Տես **Հ. Ոսկյան**, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 246-247:

Այս, ինչպես նաև մի շարք հետազոտողների առաջադրած փաստարկները և աղբյուրագիտական տվյալները միանշանակ վկայում են, որ հայոց իշխանապետ Մլեհի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ եղած այն կարծիքները, թե իբր վերջինս ուրացյալ է, չափազանցություն են և որևէ կապ չունեն պատմական ճշմարտության հետ:

Բանալի բառեր- *Մլեհ, Կիլիկիա, ուրացյալ, պետություն, պատմիչ, հետազոտող, քրիստոնյա, մահմեդական, քաղաքականություն, հայոց իշխանապետ, կրոն, իշխանություն*

К ВОПРОСУ О РЕЛИГИОЗНОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ КНЯЗЯ МЛЕХА

Арам Оганнисян

Ключевые слова: *Млех, Киликия, отступник, государство, историк, исследователь, христианин, мусульманин, политика, армянский князь, религия, власть*

Настоящее исследование посвящено одному из самых знаменитых и выдающихся деятелей Армянского Киликийского государства Млеху Рубиняну. В работе рассмотрен вопрос об отречении армянского князя. Изучая средневековые источники, а также принимая во внимание взгляды, имеющиеся в современной научной литературе, мы постарались подробно изложить суть этой проблемы и дать объективную и беспристрастную оценку.

Мы обратились к трудам средневековых историков, содержащим важные сведения для рассмотрения армянского правителя Киликии Млеха Рубиняна как отсупника. Проблема освещена также с точки зрения современной историографии.

В статье обосновано несоответствие исторической истине сведений некоторых историков и мнений исследователей по поводу отступничества киликийского князя Млеха Рубиняна.

ON THE PROBLEM CONNECTED WITH THE PRINCE MLEH'S RELIGIOUS WORSHIP

Aram Oganisyan

Key words: *Mleh. Cilicia, apostate, state, historien, researcher, christian, muslim, politics, armenian Prince, religion, power.*

The article is on the activities of Mleh Rubinyan, one of the most distinguished and known person in the Armenian Cilician. The article particularly deals with fact that he is considered to be a traitor Prince.

Based on both the testimonies from the medieval sources and the veiwpoints present in the literature on the speciality of the contemporary researchers, we have maid an attempt to thoroughly and deeply investigate and give an objective and just evaluation to the matter.

The article exemplifies the facts given in the works of medieval sources on the matter. Parallelly the facts given in the contemporary literetur have been elucidated. It has been proveb that the fact of the Prince Mleh's being a traitor mentioned both in the medieval sources and some viewpoints expressed by the contemporary researchers do not prove the fact and have no connection with the historical truth and the reality.